РАОБШИНАГЮМРИ
"ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ
СПЕЦИАЛИЗИРОВАННАЯSPORT DANCE S
ШКОЛА ТАНЦА И
СПОРТИВНОГО ТАНЦА"ОНО

RA GYUMRI COMMUNITY
"JUNIOR-YOUTH DANCE AND
SPORTSSCHOOL" CNCO

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ<<ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ

ք. Գյումրի, Շահումյան 185ա № 01E-mail: allarmenian_dsdc@mail.ru19.02.2026թ.Հեռ.+37494/77 67-87-67 +37495/94-98-98

Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող

պարոն Ա.Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Տեղեկացնում ենք, որ Գյումրի համայնքի Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը 2025թվականին նշելու էր իր հիմնադրման 20-ամյակը, որի շրջանակում նախատեսվել էր կազմակերպել հոբելյանական համերգ՝ նվիրված մարզադպրոցի տարիների գործունեությանը, սաներին և մարզիչներին:

Մինչ օրս մեր կողմից ներկայացված գրության և զեկուցագրի վերաբերյալ պատասխան չենք ստացել, ինչի պատճառով համերգի կազմակերպման գործընթացը ժամանակավորապես հետաձգվել է: Այնուամենայնիվ, միջոցառման կարևորությունը հաշվի առնելով՝ աշխատանքները շարունակվել են մեր հնարավորությունների սահմաններում:

Ըստ նախնական նախահաշվի 10 մլն դրամից կարգավորվել է գումարի մի մասը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ որոշ անապահով ընտանիքների երեխաների պարային զգեստների և կոշիկների հարցը դեռևս բաց է մնացել և աջակցության կարիք ունեն:

Մասնավորապես, մարզադպրոցն ավարտող սաների ծնողները, նախապատրաստական և ուսումնամարզական խմբերի երեխաների ծնողները մեծ պատասխանատվությամբ իրենց վրա են վերցրել երեխաների զգեստների և կոշիկների ձեռքբերման ծախսերը: Սակայն, չնայած կատարված ջանքերին, հոբելյանական համերգը լիարժեք իրականացնելու համար դեռևս անհրաժեշտ է շուրջ 5.000.000 (հինգ միլիոն) դրամ:

Հաշվի առնելով միջոցառման կարևորությունը Գյումրու մարզական և մշակութային կյանքի համար՝ խնդրում ենք ձեր աջակցությունը հոբելյանական համերգի կազմակերպման ֆինանսական աջակցության հարցում:Վստահ ենք, որ ձեր աջակցությամբ հնարավոր կլինի արժանապատվորեն նշել մարզադպրոցի 20-ամյակը և խրախուսել մեր երեխաների ու երիտասարդների նվաճումները:

Կանխավ շնորհակալություն համագործակցության և աջակցության համար:

Կից ներկայացվում է 25.08.2025թ.-ի № 11 գրությունը և 07.10.2025թ.-ի№ 14 զեկուցագիրը:

Հարգանքով մարզադպրոցի տնօրեն՝ Մ. Մամյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՄՈՒՏՔ N 19.02.2026 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 2243

РА ОБЩИНА ГЮМРИ
"ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ
СПЕЦИАЛИЗИРОВАННАЯ
ШКОЛА ТАНЦА И
СПОРТИВНОГО ТАНЦА"ОНО

RA GYUMRI COMMUNITY
"JUNIOR-YOUTH DANCE AND
SPORT DANCE SPECIALIZED
SPORTS SCHOOL" CNCO

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ

ք. Գյումրի, Շահումյան 185ա
E-mail: allarmenian_dsdc@mail.ru
Հեռ.+37494/77 67-87-67 +37495/94-98-98

№ 14
07.10.2025թ.

Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Վ. Ղուկասյանին
Գյումրի համայնքի «Պարի և սպորտային պարերի
մասնագիտացված մանկապատանեկան
մարզադպրոց»-ի տնօրեն Մարիաննա Մամյանից

# ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Մարզադպրոցի հիմնադրման 20-ամյա հոբելյանական համերգի անցկացման վերաբերյալ

Հարգելի համայնքի ղեկավար,

Սույնով տեղեկացնում եմ, որ «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը» 2026 թվականին նշում է իր գործունեության 20-ամյակը:

Տարիների ընթացքում դպրոցը ձևավորել է բազմաթիվ շնորհալի սերունդներ, մասնակցել է հանրապետական և միջազգային մրցաշարերի, արժանացել մի շարք պատվոգրերի և մեդալների՝ նպաստելով համայնքի մշակութային և սպորտային հեղինակության բարձրացմանը:

Հոբելյանական համերգը նպատակ ունի

- ամփոփել դպրոցի անցած ճանապարհը,
- ներկայացնել սաների ձեռքբերումները,
- խրախուսել ուսուցիչների և մարզիչների նվիրված աշխատանքը,
- և համայնքի բնակիչներին պարգևել մշակութային գեղեցիկ երեկո:

Միջոցառման ընթացքում նախատեսվում է՝

- տարբեր տարիքային խմբերի սաների ելույթներ,
- լավագույն սաների պարգևատրում,

- երաժշտական և բեմադրական բեմահարդարում,
- լուսային և ձայնային ձևավորում,
- հյուրերի ընդունելություն և տեխնիկական սպասարկում:

Համերգը կանցկացվի Վ. Աճեմյանին անվան պետական դրամատիկական թատրոնում 2026թ.-ի մարտ ամսին:

Հաշվի առնելով միջոցառման ծավալը և կազմակերպչական ծախսերը՝ խնդրում եմ համայնքի բյուջեից հատկացնել մոտավորապես 10,000,000 (տաս միլիոն) դրամ՝ միջոցառման պատշաճ կազմակերպման համար:

**Նախահաշիվ (նախնական)**

| | Ծախսի անվանում | Չափման միավորը | Քանակ | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| | Բեմահարդարում, ձևավորում, դեկորացիաներ /Ներառյալ բեմի կառուցում, լուսավորություն/ | | | | 1 000 000 |
| | Ձայնային և լուսային տեխնիկա, վարձակալություն /մասնագիտական սպասարկմամբ/ | | | | 1 600 000 |
| | Հագուստ, կոստյումներ, աքսեսուարներ, կոշիկներ | | | | |
| | • լատինաամերիկյան /չա-չա, սամբա, ջայվ/ | հատ | 12 | 60 000 | 720 000 |
| | • լատինաամերիկյան /չա-չա, սամբա, ջայվ/ պարային կոշիկներ | հատ | 30 | 18 000 | 540 000 |
| | • լատինաամերիկյան/ռումբա/ | հատ | 12 | 45 000 | 540 000 |
| | • լատինաամերիկյան /իսպանական-պասադոբլ/- | հատ | 10 | 80 000 | 800 000 |
| | • Պարահանդեսային պարեր | հատ | 10 | 80 000 | 800 000 |
| | • Հայկական ժողովրդական | հատ | 16 | 60 000 | 960 000 |
| | • Ստեպ | հատ | 20 | 45 000 | 900 000 |
| | • Ստեպ/ կոշիկներ/ | հատ | 20 | 35 000 | 700 000 |
| | Տպագրական և դիզայնի աշխատանքներ (հրավերքներ, | | | | 150 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պաստառներ, սերտիֆիկատներ) | | | | |
| | Պարգևատրում և խրախուսական նվերներ | | | | 100 000 |
| | Տեսագրություն, լուսանկարահանում, մոնտաժ /համերգի արխիվացման և PR-ի համար/ | | | | 600 000 |
| | Ընդհանուր կազմակերպչական ծախսեր /հյուրընկալություն,անձնակազմ, աննախատեսելի/ | | | | 500 000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | 9 910 000 |

Խնդրում եմ քննարկել և հաստատել միջոցառման կազմակերպման համար պահանջվող ֆինանսավորման հատկացման հարցը: Համերգի ամբողջական Ֆինանսավորման դեպքում տոմսերի վաճառք չի նախատեսվում, մուտքը լինելու է հրավիրատոմսերով:

Հարգանքով՝

Պարի և սպորտային պարերի մասնագիտացված
մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Մ. Մամյան

РА ОБШИНА ГЮМРИ
"ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ
СПЕЦИАЛИЗИРОВАННАЯ
ШКОЛА ТАНЦА И
СПОРТИВНОГО ТАНЦА"ОНО

RA GYUMRI COMMUNITY
"JUNIOR-YOUTH DANCE AND
SPORT DANCE SPECIALIZED
SPORTS SCHOOL" CNCO

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ

ք. Գյումրի, Շահումյան 185ա
E-mail: allarmenian_dsdc@mail.ru
Հեռ.+37494/77 67-87-67 +37495/94-98-98

№ 11
25.08.2025

Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Վ. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան,

Սույնով տեղեկացնում ենք, որ Գյումրի համայնքի <<Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը>> 2025թ.-ի դեկտեմբեր ամսին նախատեսում է հանդիսավոր համերգ, նվիրված իր հիմնադրման 20-ամյակին: Հոբելյանական այս միջոցառումը ոչ միայն կարևոր մշակութային իրադարձություն է համայնքի համար, այլև եզակի հնարավորություն՝ ներկայացնելու մեր սաների տարիների նվաճումները և մարզադպրոցի դերը համայնքի երեխաների ու երիտասարդների կրթության ու մշակութային դաստիարակության գործում:

Համերգի պատշաճ կազմակերպման և բարձր մակարդակով իրականացման համար նախատեսվում են հետևյալ հիմնական ծախսերը.

- Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճի վարձակալություն
- Բեմի և դահլիճի ձևավորման աշխատանքներ
- Տեխնիկական ապահովում (լուսային և ձայնային սարքավորում)
- Հատուկ բեմական տարազներ և պարային կոստյումներ
- Տպագրական և տեղեկատվական նյութեր (հրավերներ, պաստառներ, ծրագիր)
- Տրանսպորտային և կազմակերպչական ծախսեր

Հաշվի առնելով միջոցառման նշանակությունն ու համայնքի մշակութային կյանքի զարգացումը, ակնկալում ենք Ձեր աջակցությունը՝ միջոցառման կազմակերպման համար նախատեսված ֆինանսական ծախսերի իրականացման հարցում: Ընդհանուր ֆինանսական ծախսերը կկազմեն մոտ 10մլն ՀՀ դրամ:

Հիմնականում մարզադպրոցի հոբելյանական համերգները տեղի են ունեցել մարզադպրոցում սովորող երեխաների ծնողների, հովանավորների և մարզադպրոցի աշխատակիցների շնորհիվ: Քանի որ այս տարի արդեն իսկ մասնակցել ենք բազմաթիվ

միջազգային մրցաշարերի և փառատոնների թե հանրապետությունում, թե արտերկրներում, ուստի ֆինանսական առումով մարզադպրոցը չի կարող հոգալ հոբելյանական համերգի ծախսերը:

Վստահ ենք, որ Ձեր օժանդակությամբ մեր համերգը կդառնա համայնքի համար տոնական իրադարձություն և ոգեշնչման աղբյուր մեր սաների ու նրանց ընտանիքների համար:

Խնդրում ենք դիտարկել համերգի կազմակերպման համար համայնքի բյուջեից ֆինանսական աջակցություն տրամադրելու հնարավորությունը:

Հարգանքով
Մարզադպրոցի տնօրեն　　　　　　　　Մ. Մամյան